ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Լայթսպորտ ՍՊԸ-ն ՀՀ ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/23 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
4	Lightsport	Լայթսպորտ ՍՊԸ	«Մանկական խաղային համալիր» Տարիքային խումբ՝ 5-12 տարեկան, Չափսեր՝ (4300-4800)x(3000)x(3400-3900)մմ Ապահովության գոտի՝ (8300-8800)-(7200-7700)մմ: Կիրառություն: Խաղասարքը նախատեսված պետք լինի միաժամանակյա երեք երեխայի ակտիվ շահագործման համար, ովքեր պետք է լինեն ոչ ավելի քան 204կգ: Բաղադրիչներ: Խաղասարքը պետք է բաղկացած լինի հինգ առանձին մասերից՝ երկու հարթակից բաղկացած աշտարակ, սահքի հատված, զսպանակաձև աստիճան, կիսակամար աստիճան և աստիճան: Նյութեր՝ պողպատե պրոֆիլ (առնվազն 50x50x2մմ կամ համարժեք): Բռնակները պետք է լինեն առնվազն Ø25*2մմ պողպատե խողովակ, Աստիճանի բռնակները և սահմանափակիչ պատերը պետք է պատրաստված լինեն առնվազն 20*20*2մմ պողպատե պրոֆիլից: Աստիճանի և հարթակի մակերեսը պետք է ծածկված լինի առնվազն 2մմ հաստության չժանգոտվող թիթեղից, որը պետք է կամ ծածկված լինի սահքը կանխարգելող նյութով կամ ունենա բարձրության ռելիեֆային տատանումներ, որոնք նույնպես կանխարգելում են սահքը:

			Սահելու հատվածը կարող է պատրաստված լինել ապակեպլաստից, ալյումինից, չժանգոտվող մետաղից, պոլիէթիլենից, պոլիպրոպիլենից։ Սահքի հատվածի սահմանափակիչ կարելի է օգտագործել HDPE կամ առնվազն Ø38*2մմ պողպատե խողովակ։ Սահելու հատվածը պետք է նախատեսված լինի 1100-1200 բարձրության հարթակի համար։ Ունենա մոտ 2500մմ երկարություն և 400x600մմ լայնություն։ Սահելու հատվածը գետնի նկատմամբ պետք է կազմի 30-35o անկյուն։ Սահելու հատվածքը պետք է ունենա նստելու հորիզոնական գոտի, սահելու գոտի, կանգառի հորիզոնական գոտի, որի վերջին հատվածը պետք է գետնից բարձր լինի 150-250մմ։ Սահելու հատվածի և աշտարակի միացման հատվածում պետք է առկա լինեն կամ պլաստիկ սահմանափակիչ կամարաձև պատեր, կամ պողպատե պրոֆիլից բռնակներ (առնվազն Ø25*2մմ)։ Աստիճանը և աշտարակը պետք է ունենան առնվազն 600մմ բարձրության սահմանափակիչ պատեր կամ բռնակներ, որոնք կարող են լինել ինչպես պողպատե պրոֆիլից առնվազն (20*20*2մմ) այնպես էլ բարձր խտության պլաստիկից, HDPE-ից և այլ նմանատիպ նյութերից, որոնք նախատեսված են երեխաների անընդհատ կացության վայրերի համար։ Զսպանակաձև և կիսակամար աստիճանները պետք է պատրաստված լինեն առնվազն Ø25*2մմ պողպատե պրոֆիլից։ Երկու աստիճանն էլ պետք է նախատեսված լինեն H1100-1200մմ հարթակի համար։ Կիսակամար աստիճանը պետք է ունենա կիսակլոր քայլեր և ավարտվի հարթակից 300մմ բարձրության վրա։ Զսպանակաձև աստիճանը պետք է ավարտվի հարթակից 1700մմ բարձրության վրա։ Ներկվածք։ Խաղասարքի մետաղական իրանը կարող է և փոշեներկված լինել, և ներկված լինել երկշերտ փչվածքի տարբերակով։ Շփման անընդհատ գոտիները (բռնակ, զսպանակաձև ու կիսակամար աստիճանները) պետք է պարտադիր լինեն փոշեներկված։ Ներկերը պետք է նախատեսված լինեն երեխաների անընդհատ կացության վայրերի համար։ Ուղեկցվող փաստաթղթեր։ Խաղասարքի հետ պետք է տրվի խաղասարքի շահագործման անձնագիր։ Տեղադրում։ Խաղասարքը կարող է

			մատակարարվել հինգ մասից՝ աստիճան, զսպանակաձև աստիճան, կիսակամար աստիճան, աշտարակ և սահքի հատված։ H-1100-1200մմ բարձրությամբ հարթակի համար անհրաժեշտ է 400-450մմ հիմք, որը մետաղական ամրանների (առնվազն 14մմ) և բետոնացման (B200-250) միջոցով ֆիքսվում է գետնի մեջ։ Խաղասարքը պետք է պատրաստված լինի համաձայն ԳՈՍՏ 34614.5 (EN 1176-5:2017)-ի։ Խաղասարքին տրվում է առնվազն 1 տարվա երաշխիք։ Տեխնիկական սպասարկման նախընտրելի հաճախականությունը՝ տեխնիկական վիճակի ամենամյա ստուգում։ Խաղասարքը նախատեսված չէ սահմանափակ կարողություններ ունեցող երեխաների համար։ Ապրանքի տեղափոխումը և տեղադրումը կատարվում է մատակարարի հաշվին։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Лайтспорт в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/23 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
4			